


## ՊՐՕՖ. ԳՐԻԳՈՐ ԱՐՄԱԿԱՆԻ ԽԱԼԱԲԵԱՆ.

Մեռաւ ուսուցչապետ Գ. Խալաթեանը. Հայոց բանասիրութիւնը զրկուեց իր բեղմնաւոր և արդիւնաշատ ներկայացուցչից. գաղաւ բեց բարախելուց մի սիրո, որը համակուած էր ամբողջովին հայ-



ազգի անցեալ և ներկայ կեանքով. ազգային բանասիրութեան նւիրուած լազարեան ճեմարանի վետերաններից վերջինը կնքեց

Հայոց Ազգագրական բնկերութիւնը Հայ ազգագրութեան ռահվիրայ Դը- րիզը Խալաթեանի գաղաղի վրայ պատկ գրեց, որ ներկայացնուած էր ընկերու- թեան խորհրդանիշ սպասարկեան, կենարոնի վնջի միջով արմաւենու գրիչ անց- կացրած՝ գետրուարի 18-ին սպահանդէս կազմակերպեց, ուր պ. Շահնազար- եան կարգաց առ զեկուցումը Հանդիսականների ցանկութեամբ ցաւակցական հետազիր սւարկուեց հանգուցեալի եղբայրներին՝ Մոսկուաւ.

Խմբ.

իւր մահկանացու կեանքը ծանր և հոգեմաշ հիւանդութիւնից յետոյ. ներկայ թւի փետրուարի 8-ին, երեկոյեան ժամի 4-ին Թիֆլիսում վախճանուեց ուսուցչապետ Գ. Խալաթեանը:

Հանգուցեալը ծնուել է 1858 թ. սեպտեմբերի 15-ին Աղեքսանդրապոլ քաղաքում. նորա հայրը՝ վաճառական Արբահամ Գրիգորեան Խալաթեանը բնիկ Բայազետցի էր. չկարողանալով տանել քրտերի հարստահարութիւնները և որոնելով մի խաղաղ անկիւն, նա նախ գաղթում է Ալիքուչա և ապա ընդ միշտ հաստատում Աղեքսանդրապոլում. հանգուցեալի մօր անունն էր Մարիամ, որը յայտնի հայկարան Բաբերացի Տէր-Մարտիրոսեանի դուստրն էր. Գր. Խալաթեանի հայրը ժամանակի ուսումնաէր մարդկանցից մէկն էր. նա սիրում էր հին գրուածները և շատ անգամ զրադւում ընթերցանութեամբ. բացի դրանից զրում էր նաև ուսանաւորներ. Հասկանալով ուսման բարձր նշանակութիւնը նա որոշում է իւր որդոցը զպրոց ուղարկել և ահա իւր երկրորդ որդի Գրիգորին նա յանձնում է նախ Տէր-Մինասին և տիրացու Յարութիւնին, որոնց մօտ ժամանակի սովորութեան համեմատ փոքրիկ Գրիգորը կարողանում է միայն քիչ ու շատ կարդալ-զրել սովորել. 60-ական թւականներին Աղեքսանդրապոլում գոյութիւն ունէր հոգեոր զպրոց, որի մէջ դասաւանդող-ուսուցիչները նոյն տիրացուներն էին, ինչ որ տիրացու Յարութիւնը, միայն այլ անուան տակ, նոցա Խալֆա էին անուանում. Փոքրիկ Գրիգորը մտաւ այդ հոգեոր զպրոցը, որի ուսուցիչն էր Մկրտիչ Խալֆա Արաբաջեանը. բայց երկար չէ մնում նա Աղեքսանդրապոլում. հայրը զանազան տեղերից լսելով կազարեան ճեմարանի համբաւը և թէ Կովկասից բաւական թւով հայ պատանիներ են զնում այնտեղ սովորելու, որոշում է Գրիգորին ևս Մոսկաւ ուղարկել. հեշտ չէր այդպիսի մի ցանկութիւն իրագործել 60-ական թւականներին, երբ տեղի հեռաւորութիւնը, ճանապարհների հաղորդակցութեան անյարմարութիւնը ամենամեծ արգելքներն էին հանդիսանում Կովկասից դիմելու Մոսկաւ. Զնայելով այդ բոլոր դժւարութիւններին Արբահամը 1868 թ. ամառը վերցնելով Գրիգորին ճանապարհուում է Մոսկաւ, ուր հասնում է ամիս ու կէսից յետոյ, այդքան ճանապարհն անցնելով եռաձի կառքով (Տրօյկա). նոյն թւի աշնան Գրիգորը մտնում է Լազարեան ճեմարանը. 70-ական թւականներին շնորհիւ յայտնի բանասէր Մ. Էմինի Լազարեան ճեմարանում ազգային լեզուի, պատմութեան և գրականութեան ուսուցումը պատուաւոր տեղ էր բռնում և Կովկասից գնացած հայ պատանիներն այստեղ միայն հնարաւորութիւն ունէին ծանօթանալու և նուիրուելու հայի անցեալկեանքին. պատանի

Դրիգորը տարիների ընթացքում ենթարկվումէ Մ. Էմինի բարերար ազգեցութեան, որ այնուհետև խթան է լինում նորա համար ընթանալու նորա գծած շաւղով. այն մեծ համակրանքը, որ տածում էր պատասխի Դրիգորը դէպի իւր անզուգական ուսուցչապետ, երեսում է հանգուցեալի այն յօդւածից, որ զետեղել է Երա. Պօտիածի մէջ ցանկանալով ըստ արժանուոյն գնահատել թէ Մ. Էմինի և թէ Ք. Պատկանեանի գիտնական գործունէութիւնը: 1877 թ. մայիս ամսում Դրիգոր Խալաթեանը յաջողութեամբ աւարտում է Լազարեան ճեմարանի դասընթացը և մտնում Մոսկվայի համալսարանի բժշկական մասնաճիւղը,ուր երեք տարի դասախոսութիւն լսելուց յետոյ՝ Գ. Խալաթեանն այն համոզմանն է ոս լիս, որ ինքը կոչւած չէ բժիշկ լինելու. Լազարեան ճեմարանը նորա վերայ գրօշմել էր որոշ կնիք, նորա սրտի մէջ զարթեցրել էր ազգային պատմութեան և գրականութեան սէրը: Նա իսկական հայ գերդաստանի զաւակ էր, հայ ազգի անցեալով ոգնորւող և ցաւով տանջւող մի անդամը: Մ. Էմինի գեղեցիկ դասախոսութիւնները, հայ ազգի անցեալ գրական փառաւոր շրջանի երկասիրութիւնների ուսումնասիրութիւնները Գ. Խալաթեանի մէջ վառել էին այն սէրը, որ նա չէր կարող հաշտւել այդ գաղափարի հետ, ուստի թողնում է բժշկական մասնաճիւղը և փոխազդւում պատմական-լեզւաբանական ֆակուլտետը. այս ժամանակ ևս շարունակումէ լսել իւր սիրելի ուսուցչի՝ Մ. Էմինի դասախոսութիւնները և ապա լնդմիշտ որոշում է իւր ապագայ գործունէութեան ուղին և պատրաստում արդինաէտ կերպով ժառայելու ազգային բանասիրութեան համեստ, բայց վեհ կոչման: 1884 թ. նա աւարտում է իւր մասնագիտութիւնը առաջին կարգի վկայագրով, որից անմիջապէս յետոյ ճանապարհուում է Գերմանիա՝ կատարելագործելու իւր մասնագիտութիւնը: 1886 թ. յուլիսի 12-ին նա հրաւիրում է Լազարեան ճեմարան նախ իբրև հայոց լեզվի ուսուցիչ և ապա Հայոց պատմութեան ու գրականութեան ուսուցչապետ ճեմարանի լարաններում: Թանիցս առիթ է եղել լսելու նորա աշակերտներից այն սիրոյ մասին, որ տածում էին դէպի իրանց ուսուցչապետը նորա ուկնդիրները. նա հանդիսանում էր իբրև մի ճշմարիտ հայր իւր աշակերտների համար, գուրգուրում, ոգնորում և ապագայի համար հայ բանասիրութեան մշակներ պատրաստել էր երազում: 1896 թ. ամենայն յաջողութեամբ պաշտպանելով իւր գեսերտացիան „Արմենիա և պատմութեան մագիստրոսի աստիճանին. իսկ 1903 թ. ներկայացնելով

մի ընդարձակ ուսումնասիրութիւն «Արմանիկ Արշակունիք» տարբերակութիւնը պատճենաբանութիւնը կայոց պատմութեան դոկտորի աստիճանին՝ 1897 թ. նա հաստատվում է տեսուչ Լազարեան ճեմարանի և վարում է այդ ժամանակաշտումը մինչև 1903 թ., որից յետոյ ինքը հրաժարուելով վարչական որևէ պաշտօնից, շարունակում է դասախոսել լսարաններում. Անցեալ ատարուայ վերջին լրացաւ հանգուցեալ Գ. Խալաթեանի ուսուցչապետութեան 25 ամեակը. որը տօնելու բաղդի ունեցաւ միմիայն Լազարեան ճեմարանը, իսկ հայ բանասէր հասարակութիւնը սպասում էր նորա ապաքինելուն, որպէսզի ըստ արժանույն տօնէ վաստակաւոր մշակի 25 ամեայ համեստ գործունեութեան յօրեկեանը. գժբախտաբար վիճակած չէր նորան տեսնելու այդ օրը՝ 1903 թ. հանգուցեալ Գ. Խալաթեանը մասնակցել է Համբուրգի արևելագէտների միջազգային XII համաժողովին, ուր կարդացել է երկու դասախոսութիւն Հայոց պատմութեան վիրաբերեալ, առաջինն է «War Artasches von Armenien der Besieger des Krösos», իսկ երկրորդը Die Armenische version der Weltchronik des Hippolytos»: Երկու անգամ այցելել է նա տաճակահայաստան, եղել է Պօլիս, Երզրում. և այլ ուր, ժողովել է իւր մասնագիտութեան վերաբերեալ զանազան նիւթեր. իսկ Կովկաս եկած ժանանակ նա ասիթ չէր փախցնում յաճախ այցելել պատմական վայրերը, ուսումնասիրել հնութեան լնացորդները:

Իւր կեանքի եղանակով և վարուեցողութեամբ հանգուցեալ Գ. Խալաթեանը եւրոպացի էր բառիս ամենաընդարձակ նշանակութեամբ, վերին աստիճանի քաղաքավարի, պարտաճանաչ, երկրուղացու գեղարուեստի, երաժշտասէր, սիրահար ծաղիկների. ընկերական կեանքի մէջ նա անզուղական էր, ուրախ, զուարթ, մինչև իսկ զուարճախօս. մանկական և պատանեկական հասակում հայրենիքից ստացած տպաւրութիւններն այնքան ուժեղ էին, որ Մոսկուայում անգամ նա չէր մոռանում հայրենական սովորութիւնները և հայկական ծէսերը. դժբախտաբար Գ. Խալաթեանը մեռաւ մի այնպիսի ժամանակ, երբ նա աւելի կարող էր անել յօգուտ մեր բանասիրութեան, երբ երկար ատրիների ընթացքում ժողոված գիտական պաշարը նա պիտի հանդէս բերէր և մեր պատմական կեանքը լուսաբանէր, բայց անողոք հիւանդութիւնը կարճեց նորա կեանքը. Դեռ 25 տարի առաջ նա զգացիկ էր սրտի թուլութիւն. թունաւորուել էր նաև ձկնից. Նաուհայմում, ուր նա զնացել էր բժշկուելունորտի թուլութիւնը աւելի ևս սաստկանում է և չնայելով այն հանգամանքին, որ նա շարունակում էր ընդունել ածխաթթուի վաննա, բայց և այնպէս նորա ցաւերը չեն

թեթևանում, այլև նորոգւում են նորա հին հիւանդութիւնները և 54 տարեկան հասակում նորան գերեզման իշխցնում։

Հնդհանուք գծերով նկարագրելով հանգուցեալ Գ. Խալաթեանի կենացքութիւնը՝ կարևոր եմ համարում մի քանի խօսքով որոշել այն գերը, որ կատարել է հանգուցեալը հայկական բանասիրութեան պաղաքիղում։ Հրակիրուելով կաղարեան ճեմարանը իրեւ ուսուցչապետ հայոց պատմութեան՝ հանգուցեալ Գ. Խալաթեանը սկզբից և եթ որոշեց իւր ապագայ անելիքը—նուիրուել ընդմիշտ Հայոց պատմութեան և գրականութեան ուսումնասիրութեան, այսուհետև ուսկեղարու մեր պատմագիրները դարձան նորա պարագմունքի ամենասիրելի առարկաները, նա շնչում և ապրում էր այդ պատմագիրների նկարագրած կեանքով, նա խորաթափանց մտքով սաւառնում էր Հայկազնաց և Արշակունիաց շրջանում, բարեխիղն և մաքուր, իսկական բանասիրին յատուկ ժրանութեամբ քրքրում էր մեր պատմական կեանքը՝ մի նպատակ միայն ունենալով—պարզել ճշմարտութիւնը, զատել իրականը՝ պատմականը առասպելից և ցոյց տալ ազգային կեանքի այն անցեալը, որ իրօք տեղի է ունեցել Մանր և սրտամաշ են առհասարակ այդպիսի ուսումնասիրութիւնները, դոքա ոչ մի արտաքին փայլ և մեծութիւն չեն խոստանում արդիւնաւէտ զործչին բայց հանգուցեալը երբեք փառքի չէ ձգտել. նորա համար ամենամեծ փառքը և մեծութիւնն այն էր, երբ կարողանում էր Հայոց որեւէ մի պատմագրի տուած տեղեկութիւնները ճշտել, երբ յաջողում էր նրան անցեալի փշրանքներից որևէ մի կտոր գտնել և լոյս աշխարհ հանել, ահա այդ ժամանակ նորա ուրախութեանն չափ չկար, ոչ մի արտաքին փայլ չէր կարող նորան այդչափ զուարթացներ, բերկրանք պատճառել, որքան հսութեան այդ անխօս վկաները։

80. ական թւականները, Հայոց նոր գրականութեան վերածնութեան շրջանը, իրաւամբ կարելի է կոչել նաև Հայոց հին մատենագրութեան ուսումնասիրութեան շրջան. այդ ժամանակուանից սկսած մի շարք եւրոպացի հայագէտներ՝ Գուղչմիտ, Կարբեկը, Ֆետաէր, Հիւրշման, Կոնիրեր և հայ զիտնականներ ու բանասէրներ Մ. Էմին. Գ. Պատկանեան, Ն. Բիւզանդ, Միաբան և այլք իրանց նիրեցին Հայոց պատմագիրների ուսումնասիրութեան և հանդէս բերին բաւական հարուստ և արժէքաւոր երկասիրութիւններ։ Ահա այդ ժամանակն էր, որ հանդէս եկաւ նաև Գ. Խալաթեանը, Էմինի շկոլայի միակ ներկայացուցիչը, բայց որը իւր ուսուցչից աւելի առաջ անցաւ իւր խիզախ եղրակացութիւններով և ենթագրութիւններով։ Սկսած 1881 թւականից

հանգուցեալը սկսում է հրատարակել իւր ուսումնասիրութիւնները. մինչև 90-ական թւականները նա զբաղուած էր բացառապէս Հայոց գրականութեան պատմութեան ուսումնասիրութեամբ և ազգագրութեամբ. այս շրջանում նա առանձին ուշադրութիւն է դարձնում հայ ժողովրդի ազգագրական նիւթերի վերայ, «չ միայն ձեռնարկում է մաս-մաս հրատարակել այլն սկսում է դոցա մի մասը քննութեան առարկայ դարձնել, ինչպէս օր. հայ ժողովրդական հեքեաթները՝ կամենալով ցոյց տալ այն կապը, որը կայ հայ ժողովրդի, սլաւոնների և գերմանացիների ժողովրդական հեքեաթների մէջ, Հայոց գրականութեան պատմութեան և ազգագրութեան նա նուիրել է 15 ուսումնասիրութիւն, որոնցից առաջինն է.

1) „Давидъ Сасунскій“ образчикъ народнаго армянскаго эпоса 1881 թ. пропѣт հանգուցեալը կամեցել է հայոց ժողովրդական վէպի մի նմուշը տալ, թարգմանելով ուսւերէն և տպագրելով „Жур. Минис. Народ. П.“ ամսաթերթի մէջ և ապա առանձին յառաջարանով Братская Помощь ժողովածուի մէջ:

Նորա Բ-դ ուսումնասիրութիւնն է «Ղազար Փարպեցի և գործք նորին» գրաբար լեզովի (Лазарь Парпсий и его труды) 1883 թ. ուր հանգուցեալ ուսուցչապեսը քննութեան առնելով Ղազար Փարպեցու պատմութիւնն ու թուղթը, ցոյց է տալիս այդ մատենագրի չիշուած ազրիւները՝ Մ. Խորենացին և Եղիշէն, բայց յետոյ նա փոխում է իւր կարծիքը, վերջիններիս համարելով աւելի ուշ ժամանակուայ հեղինակներ (VI—VII-րդ):

Գ-դ երկասիրութիւնն է «Общий очеркъ народныхъ армянскихъ сказокъ» որ առաջին անգամ հրատարակուել է 1885 թ. ուսուցչապետ Միլիերի խմբագրութեամբ հրատարակուող ազգագրական հանդէսիմէջ, յետոյ արտասպուել է «Братская Помощь» ժողովածում և ապա թարգմանել է գերմաներէն և հրատարակուել «Armenische Bibliothek»-ում 1886 թ.

Դ-դ գրուածքն է «Моисей Хоренский и древний эпосъ армянскій и слѣдование И. О. Эмина. իւր ուսուցչապետի այս հետազոտութեան առթիւ հանգուցեալ Գ. Խալաթեանը առաջին անգամ արտայայտում է իւր կարծիքը Մ. Խորենացու պատմութեան մէջ յիշուած ժող. վէպի վերաբերեալ, որի մասին մենք քիչ յետոյ կխօսենք, երբ կըթուենք նորա գրուածքները Մ. Խորենացու պատմութեան վերաբերեալ: Սորա հայերէն թարգմանութիւնը տպագրուած է 1886 թ.

Ե-դ. «Մըրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների» 1887 թ. Եթէ չեմ սխալւում, առաջին ան-

դամ հանգուցեալ Դ. Խալաթեանն է լուրջ ուշադրութեան առել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթերը մշակելու խնդիրը, նա այդ հարցով զրազուել է դեռևս 1880—1881 թւականներին, ուսումնասիրել է Ռուսաց զրականութեան այդ մասը և ապա կազմել մի ընդարձակ ծրագիր՝ իրքեւ առաջնորդ հայ ժողովրդի ազգագրութեամբ զրազուղ անդամների համար. այդ նոյն գրւածքի յառաջարանում բացատրելով ազգագրական նիւթերի նշանակութիւնը մեզ համար և ցաւօք սրտի տեսնելով, որ այդ ուղղութեամբ դեռ ոչինչ չէ արուած մեր մէջ, նա վշտացած գրում է. «Ժողովրդի խօսքն ու բարբառը, հին ծէսն և սնապաշտութիւնը, առասպեկական վէպն ու աւանդութիւնը, հին երդն ու խաղը, հեքեաթն ու առածը, որպէս և շատ ազգային իրաւաբանական սփորութիւնների—մեր աչքի առաջ պակասում, նուազում, մարտում արհամարհանքի կամ մոռացման են տրում և հետզետէ անհետանալու վիճակին մօտենում, շփւելով ու ընդհարուելով նորաձեռութիւնների, կեանքի նոր գաղափարների ու պայմանների, զրաւոր օրէնքների հետ, նոցա հոսանքին չըդիմանալով և նոցա տեղի տալով, կանցնի շատ-շատ մի կէս գար և այդ մեր պապերից աւանդած հազարաւոր տարիների՝ շատ կողմից թանկագին կտակը, կըկորչի անդարձ, եթէ օր առաջ հոգ չտանենք խընամքով արձանագրելու նորան և պահպանելու ապագայի համար և մեր այսպիսի անփութութեան փոխարէն անվերջ պէտք է պարսաւեն ու նախատեն մեզ գալոց սերունդները».

Զ-դ «Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը» Խ. ծ. վ. Ստեփանէի թարգմանութեամբ 1890 թ. սա մի մանրամասն և լուրջ քննադատութիւն է Մ. Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգմանութեան առթիւ գրած. նախքան քննութեան անցնելը հանգուցեալը որոշում է զրաբար և աշխարհաբար լեզուի սահմանները, որից յետոյ աւելացնում է ոգրականութեան համար զրաբարը այն մեծագին գանձարանն է, որի մէջ պահուած ենք տեսնում մեր նախնական կեանքի հրաշալի նկարագիրները, մեր հինաւուրց քաղաքակրթութեան և ինքնուրոյնութեան թանկագին յիշատակները, որոնք հիմք և կամ գոնէ մեծ նպաստ պէտք է լինին մեր ներկայ զարգացմանը և առանց դոցա գժուար է երևակայել մեր վերածնութիւնը, ուստի հին զրականութիւնը, հայ մտքի և հանճարի այդ գեղեցիկ արդիւնքը բացի զպրոցական առարկայ լինելոց, որ անհրաժեշտ է, պէտք է որ չըպահուի ծածուկ, չըթագուի մեծամասնութիւնից դժուար ըմբռնելի հին լեզուի քօյլի տակ, այլ թարգմանուկ դիւրատար, հասկանալի ոճով և տարածուի ժողովրդի մէջ։ Յայտնելով իւր ուրախութիւնը, որ հայոց դա-

սական հեղինակների երկերը սկսել են թարգմանել աշխարհաբար լեզունվ և անցնելով Խ. Ստեփանէի թարգմանութեան ու մանրամասն փաստեր առաջ բերելով, նա զանում է որ Խ. Ստեփանէն «ձեռք է զարկել այսպիսի մի գործի, որի համար ոչ կարևոր գիտութիւն ունի և ոչ պատշաճաւոր պատրաստութիւն, մանաւանդ աշխարհաբար լիզուի ոնքը ի կողմից... պէտք է նորից թարգմանել նորանն»:

Ե-դ «Եղիշէի պատմութիւն Վարդանայ» ըստ Անձնացհաց օրինակի. հրատարակութիւն Խ. Յովհաննիսեանի. 1882 թ. Շուրջ ամսաթերթում տպագրուած. այս քննադատական յօդուածի մէջ մի քանի զգացուած խօսքերով որոշելով Եղիշէի պատմութեան նշանակութիւնը և ապա անցնելով այդ նոր հրատարակութեանը, գտնում է, որ դա գոհացուցիչ չէ և ոչ մի տարրերութիւն չունի նման այլ տպագրութիւններից:

Հ-դ «Ձենոր Գլակ» 1893 թ. այս ուսումնասիրութեան մէջ հանգուցեալ Գ. Աւալաթեանն առաջ բերելով այն աւանդական կարծիքը, որ իբր թէ Ձենոր Գլակը ժամանակակից է եղել Գրիգոր Լուսաւորչին և վերջինս առաջարկութեամբ գրել է Հայոց պատմութիւնը (սկսած Տրդատի հայր Ասորովի սպանութիւնից ու Գրիգոր Լուսաւորչի ձեռքով կատարուած հրաշագործութիւնները) ուրեմն նա IV-դ դարու հեղինակ է, ապացուցանում է, որ Ձենոր ասորու անունով մեր ձեռքը հասած պատմական երկը կարող է գրուած լինել միմիայն V—VIII դարում, հեղինակը օգտուել է տեղական աւանդութիւններից և այլ գրական երկերից, ուրեմն նա IV-դ. դարում չէ ապրել և նկարագրած դէպքերին ականատես չէ եղել:

Թ-դ «Եղիշէի աղբիւրների առթիւ» 1895 թ. տպագրած է «Հանդէս Ամսօրեայի» մէջ. քննութեան ենթարկելով Եղիշէի պատմութեան աղբիւրները, հանգուցեալն այն եղբակացութեանն է գալիս, որ Եղիշէն օգտուել է Հապար Փարագեցու Հ. պատմութիւնից և այլ վարքագրութիւններից, հետեւազէս և աւելի ուշ ժամանակուած հեղինակ է, քան մինչև այժմ ենթադրում էր:

Ժ-դ («Օновոօտկրյուխъ „книгахъ Паралипо менона“ въ древнѣйшемъ армянскомъ переводе»)

Ժ-դ «Գիրք մացորդաց» հայկական հնագոյն թարգմանութեամբ 1896 թ. և Ժ-դ «Նորագիւտ Մնացորդաց գրքի» Լոնդոնի ձեռագիրը. 1901 թ. տպագրւած «Հանդէս Ամսօրեայում». Գ. Աւալաթեանի ամենամեծ ծառայութիւնը, որ նա մատուցեց թէ Հայոց բանասիրութեան, թէ մամնաւորապէս լիզեին և թէ ընդհանուր եւրոպական գրականութեան, է «Մնացորդաց Գրքի» այս

գիւտը հայկական մի քանի ձեռապիրներում. Հայոց պատմապիրներից վաղուց ի վեր յայտնի էր, որ Վ.-դ դարում հայերը առաջնակամ Ասորերէն Պեշիթա օքինակից են թարգմանել Աստուածաշոնչը, իսկ յետոյ սրբազրել են ըստ 70-ից թարգմանութեան. և որովհետեւ Ասորերէն Պեշիթան վաղուց ի վեր կորել էր, ուստի բանաէրները որոնում էին, թէ արդեօք Հայոց Ածաշընչի թարգմանութեան մէջ պահպանումն կարող են լինել Պեշիթայի հետքերը. երկար ժամանակ տցր որոնումները ապարդիւն անցան. 1894-թուականից սկսած էջմիածնի համեստ միաբաններից մէկը Եղ. Վ. Հասանջալալիեան համեմատում էր էջմիածնի ձեռապրատան մի քանի Աստուածաշոնչ օքինակները. ահա այդ ժամանակ նա նկատում է, որ 2 ձեռապիր ունին բոլորովին տարբեր ընթերցուածներ «Մնացորդած գրքերի» բաժնում. Եղիա վ-ը ենթադրելով հանդերձ, թէ դա կարող է տարբեր թարգմանութեան հետք լինել, այնուամենայնիւ կարեւոր նշանակութիւն չէր տալիս և շարունակում էր իւր համեմատութիւնը. 1895 թ. ամսուը հանգուցեալ Գ. Խալաթեանը գալով էջմիածնին և Եղիա վ-ից տեղեկանալով այդ նորութեան մասին, ուշի ուշով քննում է այդ տարբերութիւնը և գտնում, որ «Մնացորդած գրքերը» 2 ձեռապիր մէջ պահպանւած են Ասորերէն Պեշիթայի թարգմանութեամբ. զգալով այդ մեծ գիւտի նշանակութիւնը նա խոկոյն և եթ հրատարակումէ և հրաւիրում բանաէրների ուշադրութիւնը այդ թանկագին բեկորի վերայ. ճ տարի յետոյ Լոնդոնի թանգարանում նա գտնում է մի այլ հայերէն ձեռապիր Աստուածաշոնչորի մէջ «Մնացորդած գրքերը» նոյնպէս էին թարգմանւած, ինչպէս և էջմիածնի ձեռապիրների մէջ: Այդ գիւտը առիթ տւեց մի քանի գիտնականների զրադւելու «Մնացորդած գրքերի» հայերէն հնագոյն թարգմանութեան ուսումնասիրութեամբ. պյառէս պրօֆ. Մալը համարելով դա մի անգին գանձ Հայոց լեզւի համար, քննում է լեզուական տեսակետից. իսկ Տիրերնագինի ուսուցչապետ Ֆետուերը, իրեւ ասորագէտ, մի առանձին յօդուածով կամենում է ցոյց տալ, թէ որ որչափով հայերէն այդ թարգմանութիւնը կը-րում է Ասորերէնի հետքերը:

Փր.-դ Fragmenta Iranische Sagen bei Grigor Magistros 1895. Այս գիւրիկ գրուածքի մէջ, որը գրուած է գերմաներէն լեզուվ, Գ. Խալաթեանը կամենում է ցոյց տալ, թէ Գր. Մազիստրոսի երկասիրութիւնների մէջ պահպանւած են իրանական առասպեկներ և վէպեր.

Ժդ.-դ Два армяниста Н. О. Эминъ и К. Ш. Паткановъ, պահպանած է «Братская Помощь»-ի մէջ, այստեղ նա հանդիս է

բերում այդ հայագէտների գիտնական գործունէութիւնը և նշանակութիւնը:

Ժղ-դ «Պոմյան Պ. Փետրեա և Գ. Գելցեր» 1907 թ. երկու հայագէտների յիշատակին նվիրւած մի ամփոփ գրւած է, ուր ուղղում է նորա խաղացած գերը հայկական բանասիրութեան ապարէզում:

Ժե-դ «Հայոց ազգագրութեան վերաբերեալ նիւթեր են, որոնք զետեղուած են էմինեան ազգագրական ժողովածուի VII գրքում:

Բայց աւելի՝ ևս բովանդակալից և արդիւնաւէտ են հանգուցեալ Գ. Խալաթեանի այն երկասիրութիւնները, որոնք վերաբերում են Հայոց պատմութեան ազգիւրների քննադատութեան. այս երկասիրութիւնները, որոնք թւով 12 հատ են, մեծաւ մասամբ կենդրուացած են Մ. Խորենացու պատմութեան ուսումնասիրութեան շուրջը. Հայոց պատմազիրների հայրը, հայի անյիշատակ ժամանակների կեանքը վերստեղծող՝ և ազգային փառքով հպարտացող ու ցաւով տանջող Մ. Խորենացին եղել է հանգուցեալ Գ. Խալաթեանի գործունէութեան ամբողջ կեանքի ուսումնասիրութեան առօրկան. մեր նպատակից գուրս է մանրամասն տեղեկութիւններ տալ այդ երկասիրութիւնների մասին, բայց որպէսզի կարելի լինի մի ընդհանուր գաղափար կազմել, թէ ի՞նչ նորութիւն է մտցրել հանգուցեալ Մ. Խորենացու պատմութեան ուսումնասիրութեան գործի մէջ, ես կըթուեմ նորա այդ ուղղութեամբ գըրուածները և ապա համառօտ կերպով առաջ կըերեմ նորա ուսումնասիրութիւնների արդիւնքը մեր քերթողանօր նկատմամբ.

1) Zur Erklärung der Armenischen Geschichte des Moses von Choren, » 1893 թ.

2) «Начало критического изучения «Истории Армении» Моисея Хоренского» 1894 թ.

3) «Армянский эпосъ въ исторіи Армении Моисея Хоренскаго». 1896 թ.

4) «Маръ-Абасъ Мциурнійскій или псевдо-Агаeanгель» 1897 թ.

5) «Մովսէս Խորենացու ազրիւնները, Խորենացին և Գրիգոր Նազիազանցին». 1897 թ.

6). «Մ. Խորենացու նորագոյն ազրիւրների առթիւ» 1898 թ.

7). «Объ Абгарѣ, царѣ Эдесскомъ—по Моисею Хоренскому» 1900 թ.

8). «О нѣкоторыхъ географическихъ названіяхъ древней Арmenіи въ связи съ данными Ванскихъ надписей» 1901 թ.

9) «Армянские Аршакиды въ Исторіи Армениі Моисея Хоренского». 1903 р.

10) «Къ вопросу объ армянскомъ лѣтосчислѣніи» 1905 р.

11) «Очеркъ Исторіи Армениі въ связи съ общимъ ходомъ событий въ Передней Азии».

Մ. Խորենացու պատմութեան շուրջը կազմուել է բաւական հարուստ մի գրականութիւն. թէ եւրոպացի հայագէտները և թէ մերազնեայ բանասէրները ամեն անդամ երբ կամեցել են Հայոց պատմական կենացի գրական մասցորդների ուսումնասիրութեամբ զբաղուել, միշտ կարիք են զգացել նախ և առաջ. Մ. Խորենացու Հայոց պատմութիւնը ուսումնասիրել կամ աւելի մօտ ծանօթանալ այդ հեղինակի հետ, որովհետև առանց այդ հեղինակի պատմութեան աղքիւրների ուսումնասիրութեան և հեղինակի անձնաւորութեան ու ժամանակի որոշման շատ հարցեր մնում էին մութ և անլուծելի. այդ է պատճառը, որ հայոց պատմագիրներից ոչ մէկը այնքան քննութեան առարկայ չէ եղել և ոչ մէկ պատմագրի մասին այնքան հակասական կարծիքներ չեն արտայայտուել որքան. Մ. Խորենացու վերաբերմամբ: Մ. Խորենացու պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղուող բանասէրներին իրօք ապրել է V-դ դարում, հաւատոի պատմագրի է, նորա հաղորդած աղքիւրներից արդարի նոր օգտուել է և եթէ սխալներ կամ անձնութեաններ պատմութեան են նորա պատմութեան մէջ, այդ պիտի վերագրել նորա աղքիւրներին և եթէ Մ. Խորենացին երբեմն թիւրիմացութեան մէջ է ընկնում այդ յառաջնում է նորանից, որ նա ինքը կուրօքէն հաւատում է իւր աղքիւրների հաղորդած տեղեղիկութիւններին և քննադատաբար չէ վերաբերում: Միւս մասը հերքում է Մ. Խորենացու V-դ դարու հեղինակ լինելը և ժամանակը հասցնում է մինչև VII—VIII-դ դարը: իսկ աղքիւրների նկատմամբ այն կարծիքն է յայնում, թէ Մ. Խորենացին բարխիղն կերպով չէ վերաբերուել գէպի իւր աղքիւրները, այլ կեղծել է և պատմական գէպքերը շփոթել կամ վարագուրել Բ-դ կարծիքի գլխաւոր պաշտպաններն էին Գուաշմիտ, Փարագաշեան և Կարրիեր. հանգուցեալ Գ. Խալաթեանը պատկանելով Բ-դ բանակի բանասէրների թիւն՝ աւելի առաջ գնաց. նա Մ. Խորենացու ժամանակը հասցնում էր մինչև VII-րդ դարու վերջը կամ IX-դի սկիզբը, իսկ պատմութեան աղքիւրների նկատմամբ ասում է, թէ նա դիտմամբ կեղծել է, Գ. Խալաթեանի առաջին լուրջ ու-

առևմասիրութիւնը այս ուղղութեամբ է «Արմյանskij զպօշտ» Յառաջարակութեամբ կամ Համառոտակի յիշելով Մ. Խորենացու պատմութեամբ մինչև իր ժամանակ զրագուռդ բանասէրին՝ ինչպէս Լա-Կրօզ, Վ. և Գ. Վիստոն Եղարք, Շրիատէր, Փրէրէ Կատրմէր, Բընան, Ք. Պատկանեան, Գուտշմիտ, Մ. Էմին, Գարագաղեան, Կարիներ. Դիւլորիէ, Լամպուս և այլք աւելացնում է թէ Լա-Կրօզից յետոյ առաջին անդամ Գուտշմիտ լուրջ ուսումնասիրութեամբ կամած յայտնեց Մ. Խորենացու ժամանակի նկատմամբ և նորա ժամանակը հասցեց մինչև VII-դ դարը. այսուհետև իւրաքանչիւր բանասէրի ուղղութիւնը որոշելուց յետոյ նա անցնում է քննելու Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմութեան մէջ, և հետեւալ Եղարակացութեան է գալիս, որ Մ. Խորենացին իւր ձեռքի տակ ունեցիլ է ընդարձակ գրական նիւթ. միայն թէ ունենալով տեսաենցիօն նպատակ և դորա համապատասխան վերաբերելով գէպի պատմական առարկան, նա չի յիշում իւր բոլոր աղբիւրները. նոյն իսկ նորա յիշած բաւական մեծ թւով հեղինակներից և նոցա գրուածքներից իսկապէս գոյութիւն են ունեցել միայն մի քանիսը, որնք անմիջական առնչութիւն չունեն հայ ժողովրդական վէպի հետ. իսկ այդ վէպի միւս աղբիւրները, որ յիշում է Մ. Խորենացին, գոյութիւն չեն ունեցել և միայն նորա ստեղծագործութեան արդիւնքն է՝ հիմնուած գրաւոր աղբիւրների, թարգմանական և ինքնուրոյն գրուածների վերայ, որ Հայոց գրականութեան մէջ գոյութիւն ունէին և յիշում էին V-VIII-դ դարը. սոցանից են յունաց մի քանի հեղինակների գրուածները. որոնց բնագիրները կամ հատուկուար հատուածներ յայտնի են եղել Մ. Խորենացուն. Առաջին խմբին է պատկանում Մար-Արաս Կատինայի «Թաղդէացւոց գիրքը», որը յայտնի է եղել ոչ առաջ քան VІ—VIII-դ դարը. սորտ պարականոն հատուածներից օգտել է Մ. Խորենացին և լրացրելնոր և նոյնքան անհաւատարիմ նիւթերով, փոփոխելով ըստ իւր կամաց և համաձայն իւր նպատակի:

Բդ. Մ. Խորենացին ծանօթ է եղել Աբիդենի, Բերոպի, Կեֆալիոնի և Բազմավէպի գրւածքների հետ ոչ թէ անմիջապէս, ինչպէս ինքն է նկատմ հաւատացնել, այլ Եւսեբոս Կեսարիցու ժամանակագրութեան» հայերէն թարգմանութիւնից:

Գ-դ. Աւղիւպի «Գիրք Մեհենից» և նորան վերագրած պատմութիւնը անմիջական առնջութիւն չունեն Հ. ժողովրդական վէպի հետ և Մ. Խորենացու ստեղծածն է, իրօք ինչ որ մեր պատմագիրը վերագրում է «Գիրք Մեհենից» գրուածքին, նա քաղել է Ազաթանգեղուից:

Դ-դ. կասկածելի է, ինչպէս Մ. Խորենացին է վկայում, որ Պարսից առասպելները իրանց մէջ բովանդակէին Հայոց թագաւորների մասին վիպական պատմածածքներ։

Այսպիսով մի շարք փաստերից յիտոյ հանգուցեալ Գ. Խալաթեանը զալիս է այն եղբակացութեան, որ Մ. Խորենացու յիշած Հայոց ժողովրդական վէպը գրական ծագում ունի, և արուեստական կերպով յօրինուած է Աստուածաշնչի զանազան հատուածների նմանութեամբ իւր իսկ հեղինակի ձեռքով. այնուհետև նա միասմի ցոյց է տալիս այն գրաւոր աղբիւրները, որոնք ծառայել են Մ. Խորենացու համար իրքն նիւթի Հայ ժողովրդական վէպը կազմելու ժամանակ: Այսպիսի եղբակացութեան գալով հանգուցեալ Գ. Խալաթեանը Մ. Խորենացու հազորդած վէպի վերաբերմամբ, նա միանգամայն որոշում է մեր պատմագիր ուղղութիւնը և վերաբերմունքը գէպի իր առարկան: Մ. Խորենացին հանդիսանում է, ըստ Գ. Խալաթեանի, մի առեղծուածային պատմագիր, որը սիրում է կեղծել իւր աղբիւրները և իրականութիւնը շրջել ըստ իւր հանոյից:

Ա) Մ. Խորենացին ինքը մեծաւմասամբ օգտուելով իւր ժամանակ գոյութիւն ունեցող աշխարհագրական անուններից կամեցել է դոցա օգնութեամբ որոշել նախարարական տոհմերը կամ նահապետների անունները՝ հնարելով իւր կողմից բացատրութիւններ։

Բ) Ա. Խորենացու յիշած այլաբանութիւնները, որ իրը թէ ասում էին կամ երգում հայ գուսանները, ոչ այլ ինչ են, եթէ ոչ իւր ստեղծագործութիւնները՝ Աղէքսանդրի, Փիլոնի և այլոց նըմանութեամբ:

Դ) Հայկազանց պատմութեան մեծագոյն մասը անունների չոր ու ցամաք ցանկ է և արուեստականապէս յարմարեցրած Ասորեստանի թագաւորների թւին և յաջորդականութեանը՝ համաձայն կտեսիասին։ Պարթեաների մասին մի շաբք հետաքրքրական տեղեկութիւններ տալով հանդերձ, նա իւր այդ պատմութեամբ բոլորովին տարբերում է գրամմերի վերայ հիմնավծ սնորբք պատմութիւնից, հայ Արշակունյների մասին շատ տեղ ժիշտ աւելի արժանահաւատ պատմութեանց հակառակ է պատմում, Մ. Խորենացու ժամանակագրութիւնը անգոնացրցիշ է և ի մերջոյ հանգուցեալ Գ. Խալաթեանը եզրակացնում է, թէ այսուհետեւ Մ. Խորենացու պատմութիւնը պէտք է լինի մեղ համար ոչ թէ ճշգրիտ պատմական մի աղքիւր, այլ իրբն մի գեղեցիկ գրական երկ։

Հանգուցեալ Գ. Խալաթեանի արտայայտած կարծիքները մեր պատմահօր վերաբերմամբ երթեմն կարելի է չափաղանցացրած համարել, կարելի է ասել մինչև ինկիզաթ, այդ է պատճառը, որ նա իւր ծայրայեղութեան մէջ միակը մնաց, նորա գէմ դուրս եկան մի քանի բանասէրներ՝ ինչպէս պրօֆ. Մառը, Մ. Արեգեանը և այլք, որոնք կամեցան չափաւորել հանգուցեալի ժորի թոխք ները, բայց Գ. Խալաթեանը մնաց աննկուն իւր կարծիքների մէջ և այսուետեւ և շաբունակեց նոյն եռանդով քննել Մ. Խորենացու պատմութեան աղքիւրները։

Բացի սեպհական երկասիրութիւններից հանգուցեալ Գ. Խալաթեանը խմբագրել է նաև զանազան հրատարակութիւններ Հայոց բանասիրութեան վերաբերեալ. այս վայ նորա անմիջական մասնակցութեամբ և հսկողութեամբ հրատարակել է Լազարեան ճեմարանի 1X դարուց մեր ձեռքը հասած երկաթագիր աւետարանը՝ լուսատիպ և ընդարձակ յառաջարանով. 1899 թ.

2) «Յիշատակարան Աղէտից Գրիգորի Խլաթեցոյ» պատմական վիպասանութիւն Լանդթիմուրի ժամանակից. 1897 թ.

3) «Գիրք մացցրդաց» 1899 թ.

4) «Գամառ Քաթիպայի բանաստեղծութիւնները» 1881 թ. նոյնը աւելի լրիւ հրատարակութեամբ 1893 թ.

5) Ռափայէլ Պատկանեանի Ըստիր երկասիրութիւնները երկու հատորով 1893 թ.

Իւր ուսուցապետ Մ. Էմինի մահուանից յետոյ հանգուցեալ Գ. Խալաթեանը հրատարակում է նորա երկասիրութիւնները և նորա 50-ամեայ յորելեանի նկարագիրը՝ հինգ զանազան գրքերով։

Բացի այս բոլորից հանգուցեալ Գ. Խալաթեանի խմբագրու-

թեամբ մինչեւ վերջին ժամանակներս հրատարակւում էին «Հմիւնեան ազգագրական ժողովածուի» հատորները, որոնք աչքի էին ընկնում իրանց հարուստ բովանդակութեամբ և հետաքրքիր նիւթերով, շնորհիւ յայտնի հայ բանասէրի անուան նուիրած այդ ժողովածուի, սկսեցին հրատարակւել բազմատեսակ նիւթեր՝ Հայոց զրականութեան, պատմութեան, ազգագրութեան և լեզվի վերաբերեալ. մինչև այժմ «Հմիւնեան ազգագրական ժողովածուից» լոյսէ տեսել Գ. Խալաթեանի խմբագրութեամբ ութը գիրք:

Ժամանակ առ ժամանակ հանգուցեալը իւր մասնագիտութեան վերաբերեալ զանազան յօդուածներ է զետեղել «Արարատ», «Մուրճ», «Հանդէս Ամսօրեայց» Հայոց այլ պարբերական հրատարակութիւնների մէջ. աշխատակցել էնաւ թէ Ռուսաց և թէ արտասահմանի մի քանի գիտական ամսաթերթերին:

Ահա այսքան բեղմնաւոր է եղել ուսուցչապետ Գ. Խալաթեանի գործունէութիւնը Հայոց պատմութեան և գրականութեան ուսումնասիրութեան ասպարիդում, այսչափ քրտնաթոր երկասիրութիւններ է կտակել այն ազգին, որի հարազատ զաւակն էր ինքը, որի անցեալ կեանքը ուսումնասիրելու համար նա չինայեց իւր ամենալաւ օրերն անգամ. նա մեռաւ առանց յետնորդի, մի միտք, որ անդադար տանջում էր հանգուցեալ Գ. Խալաթեանին. նա կարծէք վերջինն էր էմինի շկոլայի աներից: Եւ այժմ երբ մենք թեակովնել ենք ՀՀ-դ գարը, երբ աւելի շատ կարիք է զզացւում ուսումնասիրելու մեր անցեալ կեանքի բեկորները, երբ հայոց պատմական անցեալը դեռ շատ ու շատ բանասէրների ջանքերի կարիք ունի, երբ հարկաւոր է պարզել մեր անցեալ ուղին՝ նոր ճանապարհներ հարթելու ապագայի համար, երբ տաղանդաւոր մշակների կարիքը աւելի խորն է զգացւում, երբ քչերն են միայն, որ իրանց մէջ կոչումն են զգում դիմելու այդ համեստ ասպարէզը, ահա մի այսպիսի ժամանակ մենք զրկւում ենք մի տաղանդաւոր բանասէրից. և այս կորուսաը աւելի քան զգալի պիտի լինի մեզ համար, եթէ ի նկատի ունենանք, որ Հայոց պատմական բանասիրութեամբ զբաղողների թիւը այժմ աւելի և աւելի նւազել է. ուսուցչապետ Գ. Խալաթեանի մահը մի ծանը և անփոխարինելի կորուս է մեր բանասիրութեան համար:

Հանգիւստ ոսկերացդ, վաստակաւոր դու բանասէր:

Աս. Շանազարեան